

Հեթում Թագաւորի անուամբ ծանօթ սենեակներուն մէջ, որ երկուք են եղեր, և միացուելով մէկի վերածուած են. և  $8\frac{1}{2}$  ու  $5\frac{1}{4}$  Թեւերով բաւական սրահ մը կը կազմեն, 44 քառակուսի մէթր տարածութեամբ: Այս մատենադարան սովորաբար ընթերցարան անուանով ճանճցուած է, և բացուած է 1901ին: Գիրքերը յատուկ գրադարաններու և դարակներու և դարաններու մէջ զետեղուած են. հոն կը գտնուին նաեւ լրագրաց հաւաքածոներ: Կազմուած մանրահատոր եւ բազմահատոր գիրքերը հաշուելով 2000 Թիւր կ'անցնի, շատ գիրքեր ալ կը մնան մատենադարանին սեղանին եւ այլ տեղերու մէջ, այնպէս որ մատենադարանի նոր չէնք մը ունենալու անհրաժեշտութիւնը զգալի էր:

1929 Հոկտ. 25-28ին մեծ շքեղութեամբ տօնուեցաւ Ս. Աթոռոյ հոգելոյս գահակալ Ամեն. Տ. Եղիշէ Դուրեան Ս. Պատարարքին Յիսնամեայ Քահանայութեան Յորելեանը. այս նպատակաւ կազմուած Յորելեական Կեդր. Յանձնաժողովը որոշեց որ վաստակաւոր Յորելեարին յիշատակը Ս. Աթոռոյ մէջ յաւերժացնելու համար ընդհանուր հանգանակութեամբ մը վանքին մէջ Մատենադարան մը շինուի. և այս մտօք յայտարարութիւններ կատարուեցան, և ամեն կողմ հանգանակութեան մասնակցութիւնը կը շարունակուէր, Փարիզէն Վսեմ. Գալուստ պէյ Կիւլպէնկեան 7000 ոսկւոյ յանձնառութեամբ սիրայօժար ստանձնեց վանքին մէջ նոր Մատենադարանի մը շինութեան Կաթողիկոսական Պատուիրակ Դեր. Տ. Թորգոմ Սրբազանի միջոցաւ ի յիշատակ իր ծնողաց, և ի յարգանս Յորելեար Սրբազանին: Այս իշխանական նուիրատուութիւնը սիրով ընդունուեցաւ Յորելեար Սրբազանէն և Կեդր. Յանձնաժողովոյ կողմէն, և միւս կողմէն որոշուեցաւ որ ժողովրդական հանգանակութեան արգելնքով, Յորելեարին փափաքին համաձայն կազմուի հիմնադրամ մը՝ որուն տսկոսով պիտի հրատարակուին հայերէն կարեւոր գիրքեր, թէ՛ նախնեաց գործերէն և թէ՛ նորերէն, Դուրեան Մասնադարան տիտղոսին տակ: Յորելեար Սրբազանը յետոյ սակայն, ի կենդանութեան փափաք յայտնած էր և Կեդր. Յանձնաժողովն ալ յարմար գտած էր որ հանգանակուած գումարը՝ 3554 անգղ. ոսկի և մէկ շիլին փոխանակ ու էէ զրամատան մէջ թողով տուական ստանալու, հաստեթաբեր կալուած մը շինել ու անոր վարձքովը հրատարակել Դուրեան Մատենադարանի գիրքեր: Ս. Յա-